DOI:10.56653/18290361-2024.14-69

Համազասպ Աբրահամյան

Հայաստանի պատմության թանգարան
Հնագիտության և ազգագրության ինստիտուտ
abrahamyanhamazasp@gmail.com

ԱՆԻԻ ԵՎ ԴՎԻՆԻ ԽԵՑԵԳՈՐԾԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱԴԻՐ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ*

Հիմնաբառեր. խեցեգործական մշակույթ, Անի, Դվին, միջնադար, խեցեղենի արտադրություն, հախճապակի:

Ներածություն

Ինչպես Դվինի, այնպես էլ Անիի տնտեսության հիմնական ճյուղերից մեկը հանդիսացել է խեցեգործությունը, որը Դվինի դեպքում ներկայանում է արհեստանոցների, թրծման հնոցների, տարբեր հարմարանքների և մեծաքանակ ու բազմազան արտադրանքով: Խեցեղենի արտադրությանը վերաբերող առկա հնագիտական առարկաներն ու իրավիճակները վկայում են այդ արհեստի կարևորությունը քաղաքային մշակույթում:

Դվինի պարագայում երկարամյա հնագիտական աշխատանքների ընթացքում քաղաքի գրեթե բոլոր ուսումնասիրված հատվածներում հայտնաբերվել են տարբեր չափերի և նշանակության բրուտանոցներ կամ խեցեղենի արտադրության հետ կապվող հնագիտական առարկաներ՝ ձեռքի կամ ոտքի օգնությամբ պտտվող դուրգի անիվներ, հարդարման համար օգտագործվող քարե և ոսկրե սրածայր գործիքներ, չորացման ընթացքում մակերեսը հարթեցնող կոկիչ քարեր, եռոտանիներ, գլաններ: Հայտնաբերվել են նաև մաքուր կավահողի ամբարման համար նախատեսված հորեր, կավահողը մանրացնելու աղորիքներ, ավազ, հունցած կավե գնդեր և այլն: Դվինի գրեթե ողջ տարածքում առկա են խեցեգործական փոքր և մեծ արհեստանոցներ (տե՛ս Աբրահամյան 2021, 107-110):

Հաշվի առնելով պեղումների ընթացքում հայտնաբերված խեցեղեն առարկաների ընդհանրությունները Դվինից և հայաստանյան մյուս միջնադարյան հուշարձաններից հայտնաբերված նյութերի հետ՝ կարող ենք ենթադրել, որ դրանք պատրաստվել են նմանատիպ տեխնոլոգիաներով, գործիքներով, թրծվել են նույնական հնոցներում և այլն:

* Ստացվել է 27.07.2024, ուղարկվել է գրախոսման 31.07.2024, ընդունվել է տպագրության 01.11.2024:

1892-1917 թվականներին Անիում ակադեմիկոս Ն. Մառի գլխավորած արշավախմբի պեղումներից Հայաստանի պատմության թանգարան են հասել 2410 հնագիտական առարկաներ, որոնք բաշխված են 123, 377 և 378 համարները կրող հավաքածուներում: Եվս 18 առարկաներ գրանցված են անհատական համարներով: Չնայած նշված հավաքածուներում չկան անմիջականորեն խեցեղենի արտադրական գործընթացին վերաբերող առարկաներ, այնուամենայնիվ, Անիի խեցեգործական մշակույթը ներկայացնում են մեզ հասած հնագիտական առարկաները, միջնադարյան հայ և օտար պատմիչների աշխատությունները, և վերջիններիս հիման վրա իրականացված խորհրդային և հետխորհրդային շրջանի հետազոտողների անդրադարձները:

Անիի խեցեգործությանը նվիրված առաջին հետազոտությունները հեղինակել են հուշարձանը պեղող հնագետները: Այս տեսանկյունից արժեքավոր է արշավախմբի ղեկավար Ն. Մառի հեղինակած մենագրությունը, որը հանդիսանում է հայկական ջնարակապատ խեցեղենի համակողմանի քննության առաջին աշխատությունը (տե՛ս Մapp 1934, 36-44): Հաջորդ արժեքավոր աշխատությունները՝ նվիրված հայկական խեցեգործությանն ու Անիի, Դվինի օրինակներին, հեղինակել են Հ. Օրբելին, Կ. Ղաֆադարյանը, Ա. Շելկովնիկովը, Բ. Առաքելյանը և այլք: Սույն հոդվածում փորձել ենք համադրել ՀՊԹ ֆոնդերում պահվող Անիից և Դվինից հայտնաբերված խեցեղեն առարկաները, ուսումնասիրել առկա գրականությունը: Հոդվածը չի հավակնում իրականացնել ամբողջական քննություն, ինչի համար կարիք կա նոր դաշտային և լաբորատոր հետազոտությունների:

Խեցեգործական մշակույթ

Խեցեգործությունը մյուս տարածված արհեստների նման 9-10-րդ դարերում սկսում է կենտրոնանալ առավելապես քաղաքներում (Առաքելյան 1958, 212): Դվինը, ապա 10-11-րդ դարերից սկսած՝ Անին, դառնում են Մետաքսի ճանապարհի վրա խեցեղենի արտադրության, արտահանման և ներկրման խոշոր կենտրոններ: Խեցեղենի (և ոչ միայն) արտադրության խոշոր կենտրոնի այս դերակատարումը Դվինում շարունակվեց մինչև 1230-1250-ական թվականները, իսկ Անիի դեպքում որոշակի կարգավիճակով այն շարունակվեց մինչև 14-15-րդ դարերը (Բաբաջանյան 2014, 110):

Զարգացած միջնադարում, ինչպես ողջ Մերձավոր Արևելքում, այնպես էլ Հայաստանում, ջնարակապատ խեցեղենի արտադրությունը հանդիսացել է քաղաքային արհեստագործության ցուցիչ (Պետրոսյան 1988, 63): Երկու կենտրոններից հայտնաբերված մեծաքանակ ջնարակապատ առարկաներն ունեն ինչպես ընդգծված նմանություններ, այնպես էլ տարբերություններ՝ կապված հումքից, պատրաստման եղանակներից, օգտագործված զարդամոտիվներից: Բ. Առաքելյանը նշում է, որ, օրինակ, Դվինի կավը ավելի բաց կարմիր է և թրծելիս ավելի կարծր ու դիմացկուն է դառնում, քան Անիի բրուտների գործածած ավելի մուգ կարմիր ու համեմատաբար կոպիտ կավը (Առաքելյան 1958, 212): Երկու կենտրոններից հայտնաբերված խեցանոթները պատրաստված են կարմրավուն, դեղին, մոխրագույն, սպիտակ կավերից և դրանց տարբեր երանգներից: Անիից մեզ հա-

սած անջնարակ (հասարակ) խեցեղենի ամբողջական անոթները և տեղական արտադրության ջնարակապատ առարկաները պատրաստված են ինչպես կարմիր կավից, այնպես էլ ավելի բաց երանգների կավերից (նկ. 1)։

Այսպիսով, երկու կենտրոնների խեցեղենի տարբերակման հիմնական ցուցիչը խեցու որակն ու գույնն է։ Ըստ Ա. Շելկովնիկովի՝ այդ խեցանոթները հստակորեն տարբերվում են միմյանցից։ Դվինից հայտնաբերված անոթները հիմնականում ունեն աղյուսին նմանվող կարմիր կամ մոխրագույն գույն և համեմատաբար ավելի բարակ խեցի, իսկ Անիից հայտնաբերվածները ունեն ավելի գունավորված, կոպիտ խեցի, պատրաստված են խոշորահատիկ կավից (Шелковников 1942, 11)։ Վերոնշյալ որակական հատկանիշներով Անիում արտադրված խեցանոթների շարքին են պատկանում նաև Անբերդից հայտնաբերված ջնարակապատ օրինակների հիմնական մասը (Шелковников 1942, 18)։

Անիի հավաքածուի ամբողջական հասարակ (անջնարակ) անոթների մեջ մեծ խումբ են կազմում փոքր չափերի սափորները, կճուճները և քրեղաններ (ՀՊԹ 123/117, 123/222, 123/224, 123/225, 123/227, 123/239)։ Այս անոթներն ունեն կարմրավուն ոչ միատարր խեցի և լավ թրծված են։ Արտաքինից դրանք (հիմնականում մինչև կեսը) պատված են կարմիր անգոբով և փայլեցված են, թվագրվում են 11-13-րդ դարերով (Մուշեղյան 1982, 26-29)։ Դվինում առկա նմանատիպ օրինակները նրբախեցի են, պատրաստված միատարր հումքից։ Հետաքրքիր օրինակներ են նաև Անիից հայտնաբերված սպիտակ, մանրահատիկ կավից պատրաստված միականթ փոքր սափորները (ՀՊԹ 123/213, 123/226ա; նկ. 2)։ Անոթները երկարավուն են, վերևի հատվածում քիչ նեղացող իրանով։ Շուրթերը ալիքաձև են, հատակը՝ հարթ, իրանի վրա ունեն մատնեքներ։ Վզի վրա ունեն ուղիղ և ալիքաձև հորիզոնական գոտիներ և թվագրվում են 11-12-րդ դարերով (Մուշեղյան 1982, 27-28)։ Նշված սափորներին իր ոճավորմամբ մոտ է նաև ՀՊԹ 123/215 համարի սափորը։ Դվինից այս անոթների ամենամոտ օրինակը չափերով և որակական հատկանիշներով գերազանցում է վերջիններիս։ Նրբախեցի սափորն ունի փոքր նստուկ, իրանի վրա համաչափ մատնեքներ, իսկ վզի վրա միևնույն ուղիղ և ալիքաձև հորիզոնական գոտիները, ինչպիսիք ունեն Անիի օրինակները (ՀՊԹ 1907/143, նկ. 3)։

Ջնարակապատ անոթների դեպքում բացի խեցու որակի տարբերությունները, առկա են նաև որոշակի տարբերություններ ոճավորման մեջ։ Տոկոսային հարաբերությամբ Անիից հայտնաբերված ջնարակապատ անոթների և բեկորների մեջ մեծ թիվ են կազմում տարբեր կենդանիների, թռչունների և մարդկանց պատկերները, որոնք իրենց հերթին շրջապատված են այգային, բուսաերկրաչափական տարբեր մոտիվներով։ Դվինում այս տեսակները համեմատաբար ավելի փոքր մաս են կազմում, իրենց տեղը զիջելով հիմնականում երկրաչափական կամ խիստ ոճավորված բուսական զարդամոտիվներին (Шелковников 1942, 20)։

Եթե խոսենք երկու կենտրոններում մշակութային ժառանգության ընդհանրություններից, կարող ենք նշել նաև այսպես կոչված ներկրված բարձրարժեք առարկաների նույնականությունը, ինչը գալիս է Մետաքսի ճանապարհի վրա Անիի և Դվինի գրեթե նույնական կարգավիճակից և հետևաբար հիմնականում մերձավորարևելյան միևնույն կենտրոնների հետ նրանց կապերից։ Հետաքրքիր օրինակ

են հանդիսանում 10-րդ դարով թվագրվող բազմագույն ջնարակած թասերը, որոնցից երեք ամբողջական օրինակներ հայտնաբերվել են մեկը Անիում, մեկը՝ Դվինում և մեկը՝ Զվարթնոցում: Թասերն ունեն միատեսակ հարդարանք. մուգ դարչնագույնի և նարնջագույնի համադրմամբ նկարազարդված են տարբեր շրջաններով, եռանկյունիներով, պարուրաձև մոտիվներով (Փորմոհամմադի 2015, 36):

Միջնադարյան երկու կենտրոնների ընդհանրություններից է նաև դրոշմազարդ կարասների առկայությունը, որոնք պատրաստվել են գծազարդերով, ուռուցիկ վերադիր պատկերներով, դրոշմներով: Դրոշմները հիմնականում փոքր ինչ գոգավոր կամ հարթ, գլանաձև կամ բոլորակ կնիքներ են (Մուշեղյան 1982, 8): Այս կարասները թվագրվում են 10-13-րդ դարերով (Անիի և Դվինի դեպքում), իսկ հայաստանյան մյուս հուշարձաններում (Թեղենյաց վանք, Եղեգիս) դրանք հասնում են մինչև 14-15-րդ դարեր, բայց գեղարվեստական առումով զիջում են նախորդ դարաշրջանների օրինակներին (Բաբաջանյան 2015, 116): Առաջին անգամ հայտնաբերվելով Անիում՝ նմանատիպ կարասներ հետագայում հայտնաբերվեցին նաև Դվինում, Գառնիում, Ամբերդում և այլուր: Անիում հայտնաբերված նյութերի շարքում կա նաև մի ուղղանկյուն առարկա, որը, ըստ հետազոտողների, դրոշմ է (ՀՊԹ 123/265, նկ. 4) և կիրառվել է կարասների զարդագոտիների պատրաստման համար (Шелковников 1942, 11-12; Մուշեղյան 1982, 31): Առարկան ունի 8.67 սմ երկարություն, 6.15 սմ լայնություն և մինչ 1.38 սմ հաստություն: Ձեռածեփ առարկան իր վրա ունի սպիտակ անգոբի և կանաչ ջնարակի հետքեր: Ունեցել է նաև ջնարակապատ բռնակ: Ենթադրյալ դրոշմի հատվածում պահպանվել են ցանցաձև փորվածքի հետքեր, ինչը ունեն նաև Դվինից հայտնաբերված մի քանի ջնարակապատ կենդանակերպ տերակոտները (ՀՊԹ 1917/319, 3109/58), որոնք ներկայացվում են նաև որպես խաղաքարեր (նկ. 5):

Դրոշմազարդ կարասները ձևով և զարդանախշման տեխնոլոգիայով իրենց նախօրինակներն ունեն մերձավորարևելյան խեցեգործության մեջ՝ ուշ սասանյան և վաղ իսլամական հուշարձաններում (Պետրոսյան 1988, 53): Այս կարասները բաժանվում են երկու հիմնական խմբի: Առաջինը համեմատաբար ավելի մեծ և երկարավուն, փոքր բացվածքներով և նստուկով կարասներն են, որոնք նախատեսված են եղել մառաններում կիսով չափ գետնի մեջ խրված մթերք պահելու համար: Երկրորդ խմբի անոթները ամենատարածվածն են: Սրանք ավելի փոքր են, ուռուցիկ իրանով և լայն բացված բերանով: Ունեն երկու, չորս կամ վեց ձևավոր կանթեր և ներկված են ամբողջությամբ: Այս խմբի կարասները նախատեսված են խնջույքների ժամանակ սեղանի վրա գինի մատուցելու համար (Ղաֆադարյան 1952, 188):

Հաշվի առնելով այս ընդհանրությունները՝ այնուամենայնիվ, Անիի և Դվինի դրոշմազարդ կարասներն ունեն նաև որոշակի տարբերություններ: Դեկորատիվ առումով Դվինի կարասների զարդագոտիների հատվածները ներկված չեն՝ ի տարբերություն Անիի, որտեղ գոտիները կարասի հետ միասին ներկված են նույն կարմիր գույնով (Առաքելյան 1958, 224): Անիի կարասներին ավելի բնորոշ են գծազարդերը և գազանների ուռուցիկ վերադիր պատկերները, ինչը Դվինում և Գառնիում գրեթե չի հանդիպում: Դվինին ավելի բնորոշ են փոքր ինչ ռելիեֆ և հարթ

մակերեսով գլանաձև կամ շրջանաձև դրոշմներով զարդերը (Առաքելյան 1958, 224)։ Ինչ վերաբերում է անոթների գոտեզարդերի մոտիվներին, ապա դրանց մի մասը հանդես են գալիս խորհրդանշային-այլաբանական իմաստով և եղել են միջնադարյան մտածողության հարազատ մոտիվներ, որով էլ բացատրվում է դրանց լայն տարածումը (Պետրոսյան 1988, 57)։

Կամ ի տարբերություն Դվինի՝ Անիի և Գառնիի կարասները ունեն գծազարդեր ու վերադիր զարդեր (Առաքելյան 1958, 227)։ Իրենց որակական հատկանիշներով և համամասնություններով Դվինի կարասները ավելի նրբախեցի են և ձգված, Անիի ավելի կոպիտ խեցու և գնդաձև կարասների համեմատ (Шелковников 1942, 12-13)։ Այս հատկանիշները տարբերակում են նաև տարածաշրջանի այլ հուշարձաններում հայտնաբերված դրոշմազարդ կարասները (Առաքելյան 1958, 227)։

Անիից և Դվինից հայտնաբերված հնագիտական առարկաների մեջ մեծ թիվ են կազմում սնդկամանները։ Հերմետիկ փակված վիճակում ցնդող, թանկարժեք կամ թունավոր նյութերի պահման կամ տեղափոխման համար նախատեսված այս անոթները նույնպես ունեն որոշակի տարբերություններ Անիի և Դվինի դեպքում։ Ի տարբերություն Անիի՝ Դվինի սնդկամանների զարդերը ավելի պարզ են և գերակշռում են դրոշմազարդերը։ Անիի սնդկամանները ավելի հագեցած են վերադիր զարդերով, իսկ պահպանված հատվածներից մեկի վրա առկա է հաստ շերտով կապույտ ջնարակ (Орбели 1910, 122; նկ. 6)։ Դվինի անոթների կավը մասամբ դեղնավուն է և ավելի փխրուն, իսկ Անիինը՝ մոխրագույն-կանաչավուն և ավելի կարծր (Առաքելյան 1958, 228)։

Եզրակացություն

Միջնադարում հայկական խեցեգործության երկու կարևորագույն կենտրոններն են հանդիսացել Անին և Դվինը։ Վերջիններս, լինելով Մետաքսի ճանապարհի կարևորագույն հանգույցներ, առևտրատնտեսական կապերի մեջ են եղել ամբողջ տարածաշրջանի կենտրոնների հետ, այդ շարքում ունենալով իրենց կարևոր դիրքը։ Այս կենտրոններում արտադրված ջնարակապատ, անջնարակ առարկաներն ու հախճապակին, տարածաշրջանի մյուս կենտրոնների հետ համեմատ, տեխնիկա-տեխնոլոգիական և ոճական ընդհանրություններով հանդերձ, ունեն նաև որոշակի տարբերություններ։ Այդ տարբերությունները կապված են ինչպես կիրառած հումքի որակական հատկանիշներից, այնպես էլ ոճավորման առանձնահատկություններից։

Ընդհանուր առմամբ կարող ենք եզրակացնել, որ Անիի և Դվինի խեցեգործական մշակույթում առկա որոշակի տարբերությունները կապված են նաև Անիի ընդգծված քրիստոնեական (անկախ մեզ հայտնի երկու մզկիթների առկայությանը) կամ որոշակիորեն հայկական ժառանգությունից՝ ի տարբերություն Դվինի ընդգծված *ինտերնացիոնալ* քաղաք լինելուն և մերձավորարևելյան խոշոր կենտրոնների շարքում և վերջիններիս հետ փոխազդեցությանը։

Այնուամենայնիվ, Անիի և Դվինի խեցեգործական մշակույթի համադիր քննությունը ամբողջացնելու համար անհրաժեշտ են խեցեղենի և հումքերի համեմատական նոր լաբորատոր հետազոտություններ։

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ 2021 – Աբրահամյան Հ. Թ., Դվինում խեցեգործական արհեստի հնագիտական վկայությունների մասին, *Աշխատություններ Հայաստանի պատմության թանգարանի*, Երևան, Հայաստանի պատմության թանգարան, 2021, համար 8, 107-112:

ԱՌԱՔԵԼՅԱՆ 1958 – Առաքելյան Բ. Ն., *Քաղաքները և արհեստները Հայաստանում 9-13-րդ դարերում*, հատոր 1, Երևան, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատարակչություն, 1958:

ԲԱԲԱՋԱՆՅԱՆ 2014 – Բաբաջանյան Ա. Ա., Հայաստանի ԺԴ-ԺԷ դդ. ջնարակած խեցեղենը, *Էջմիածին ամսագիր*, Ս. Էջմիածին, Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի հրատարակչություն, 2014, հատոր ՀԱ, համար Է, 106-123:

ԲԱԲԱՋԱՆՅԱՆ 2015 – Բաբաջանյան Ա. Ա., Հայաստանի Թ.-ԺԷ. դդ. անջնարակ խեցեղենի հարդարման եղանակները, *Էջմիածին ամսագիր*, Ս. Էջմիածին, Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի հրատարակչություն, 2015, հատոր ՀԲ, համար Թ, 105-118:

ՂԱՖԱԴԱՐՅԱՆ 1952 – Ղաֆադարյան Կ. Գ., *Դվին քաղաքը և նրա պեղումները*, հատոր 1, Երևան, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատարակչություն, 1952:

ՄՈՒՇԵՂՅԱՆ 1982 – Մուշեղյան Ե. Ա., *Հայկանշական ցուցակ թանգարանային ժողովածուների*, պրակ 2, Երևան, «Հայաստան» հրատարակչություն, 1982:

ՊԵՏՐՈՍՅԱՆ 1988 – Պետրոսյան Հ. Լ., *Գառնին 9-14-րդ դարերում*, Երևան, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատարակչություն, 1988:

ՓՈՐՄՈՀԱՄՄԱԴԻ 2015 – Փորմոհամմադի Փ. Հ., *Միջնադարյան Հայաստանի ներմուծված խեցեղենը 9-14-րդ դարերում*, Ատենախոսություն, Երևան, 2015:

МАРР 1934 – Марр Н. Я., *Ани-книжная история города и раскопки на месте городища, Ленинград*, Государственное социально-экономическое издательство Ленинград, 1934.

ОРБЕЛИ 1910 – Орбели И. А., *Каталог Анийского музея древностей*, С. Петербургъ, типография императорской академии наукъ, 1910.

ШЕЛКОВНИКОВ 1942 – Шелковников А. Б., Художественная керамическая промышленность средневековой Армении, *Տեղեկագիր ՍՍՌՄ ԳԱ հայկական ֆիլիալի*, Երևան, ՍՍՌՄ ԳԱ հայկական ֆիլիալ, 1942, համար 3-4, 9-36:

Hamazasp Abrahamyan

History Museum of Armenia

Institute of Archaeology and Ethnography

abrahamyanhamazap@gmail.com

COMPREHENSIVE EXAMINATION EXPERIENCE OF ANI AND DVIN POTTERY CULTURE

Keywords: pottery culture, Ani, Dvin, Middle Ages, pottery production, terracotta.

The research focuses on the pottery of the 9th-13th centuries from Dvin. Within this study, both locally produced and imported pottery are separately examined. Among the imported pieces, alongside those from major Middle Eastern centers, the pottery centers of medieval Armenia, such as Ani, are also considered significant.

One of the main features of the city of Ani is its rich architectural and monumental heritage, which has primarily attracted researchers' attention. Consequently, Ani's pottery culture remains under-researched. Given the commonalities of the pottery objects unearthed in Ani with those found in Dvin and other medieval Armenian sites, it can be inferred that they were produced using similar technologies, tools, and kilns. Despite both Ani and Dvin being major Armenian pottery centers during the developed Middle Ages

and sharing many technical, technological, and decorative aspects, they also exhibit notable differences. This article aims to explore the commonalities and unique features of Ani's pottery culture, comparing it with the materials found in Dvin. This comparison is based on archaeological objects from Ani housed in the History Museum of Armenia, initial research by excavating archaeologists, and existing literature.

The research aims to jointly examine the pottery cultures of Ani and Dvin. Throughout the development of this topic, we will summarize all branches of Ani's pottery culture separately, highlighting their comparisons and parallels with Dvin.

Амазасп Абраамян

Музей Истории Армении

Институт археологии и этнографии

abrahamyanhamazasp@gmail.com

ПОПЫТКА СОПОСТАВЛЕНИЯ КЕРАМИЧЕСКОЙ КУЛЬТУРЫ ДВИНА И АНИ

Ключевые слова: керамическая культура, Ани, Двин, средневековье, производство керамики, фаянс.

Данное исследование является частью изучения темы производства керамики Двина 9-13 веков. В рамках темы отдельно рассматриваются образцы керамики местного производства и привозной керамики. Наряду с примерами керамики произведенной в крупных центрах Ближнего Востока, среди импортной керамики свое место занимает и керамика Ани.

Одной из основных особенностей города Ани является богатое архитектурное наследие, что всегда обращало на себя основное внимание исследователей. В результате этой тенденции керамическая культура Ани нуждается в новых исследованиях. Учитывая общность керамики найденной во время раскопок Двина с керамикой других средневековых памятников Армении, можно заключить, что керамика изготавливалась схожей технологией, инструментами, производственных печах и т.д. В Ани и Двине, являющимися крупнейшими центрами керамического производства средневековой Армении, наблюдается множество общих характерестик, так и различий технико-технологического и декоративного характера.

Целью данной статьи - исследование и разбор особенностей и общих черт керамической культуры Ани, сравнение с керамикой, найденной во время раскопок Двина. Для поставленных задач основой являются хранящиеся в Музее Истории Армении дошедшие до нас образцы керамики и археологических предметов из Ани, а также первые работы исследовавших Ани археологов и имеющаяся литература.

Данное исследование представляет собой попытку совместного рассмотрения керамической культуры Ани и Двина. В процессе дальнейшей разработки темы будут обобщены все направления керамической культуры Ани, взятые по отдельности, со своими параллелями и сравнениями.